

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/14 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	<p>Վերարկուն կանաչ գույնի կիսաբրդյա կտորից է: Կտորի երանգը համաձայնեցվում է Գնորդի հետ: Կտորի բաղադրությունը՝ 44% բուրդ. 54% պոլիէստեր. 2% լայկրա. կտորի խտությունը՝ 235 գրամ մ2: Վերարկուն կազմված է լանջափեշերից, թիկնամասից, թևքերից և մոխրագույն մորթե հանովի օձիքից: Վերարկուի առաջամասը, թիկունքը և թևերն ամբողջությամբ մշակվում են սինթետիկ նյութով, որը մզակված է աստառի հետ շեղանկյուն (փախլավածև) հյուսքով: Վերարկուն կոճկվում է կափույրով ծածկվող շղթայով: Լանջափեշերի վրա՝ վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ: Գրպանների կափույրները կոճկվում են կաշունակներով: Կողային գրպանները՝ շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Օձիքը՝ ծալովի: Ուսադիրների շրջանում՝ կաշունակով ամրակներ: Առջևի ձախ գրպանի վերևի մասում ասեղնագործվում են «ՔԿԾ» տառերը: Ընդհանուր քանակի 15%-ի գոտկատեղի հատվածում՝ ճարմանդով գոտի: Վերարկուի հետ տրվում են նաև ուսադիրները՝ 20 % ավել քանակով: Հանովի ուսադիրներն ուղղանկյուն են, գուլգահեռ կողմերով, երկարությունը 90 մմ է, լայնությունը՝ 50-52 մմ, ստորին և վերին եզրերը 2.5 մմ լայնությամբ մուգ կանաչ գույնի ասեղնագործված: Ուսադիրները ստորին հատվածում ասեղնագործվում են երկու կամ մեկ ոսկեգույն, 4 մմ լայնությամբ մակաշերտեր, որոնց քանակներն, ըստ տեսակի, կտրամադրվի Գնորդի կողմից: Ուսադիրները պատրաստվում են</p>

		վերարկուհի կտորից: Տեխնիկական բնութագրի ընդհանուր պայմանները և հանդերձանքի նկարները ներկայացված են կից՝ հավելված 1-ում:
--	--	--





## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ԲԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/14 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1		